369 [ՄՈՊՐ]
Մ-38

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԻՎ. ՄԱՐՏԻՆՈՎ

ՄՈՊՐ-Ը ՅԵՎ ՇԵՖՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏ. № 4.

ՅԵՐԵՎԱՆ—1927

1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԻՎ. ՄԱՐՏԻՆՈՎ

369 [ՄՈՊՐ]
Մ—38

1003
Т3988

ՄՈՊՐ-Ը ՅԵՎ ՇԵՖՈՒԹՅՈՒՆԸ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏ. № 4.

ՅԵՐԵՎԱՆ - 1927

2 6 JUN 2013

ՀԱՅՊԵՏՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌ. 906 Բ.
ՊԱՏՎ. 1273 ՏԻՐԱԺ 8000

ԻՆՉՈՒ ՅԵՆՔ ՄԵՆՔ ՇԵՓՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՄ ՓԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ

Սահմանից են կողմն յեղող մեր ընկերների կյանքի մասին կարելի յե շատ բան իմանալ ՄՈՊՐ-ի գրքույկներից ու հանդեսներից: Այնտեղ մանրամասն ու լավ պատմած է սահմանագծի այն կողմն յեղող պրոլետարների պայքարի մասին, այդ պայքարի դժվարությունների մասին, բուրժուազիայի անհամար վոճրագործությունների մասին: Վոչ մի այնպիսի յերկիր չկա աշխարհում, ուր չաճեր ու չլայնանար այդ պայքարը և ուր տառապանքներ ու տանջանքներ չլինեին: Աշխարհի բոլոր յերկիրներում, մի խումբ քաջեր, միատեսակ կամքով ու ցանկությամբ համակված գրոհ են տալիս բուրժուազիայի լավ պաշտպանված ամրոցի դեմ: Նրանցից շատերն անձնազոհությամբ ընկնում են այդ կռիվներում, բայց նրանց տեղ նոր մարտիկներ են յելնում, նոր ու թարմ ուժերով:

Բոլոր յերկրների բուրժուազիան հազարավոր միջոցներ ունի այդ աճող հեղափոխական շարժումը խեղդելու: Նրա ձեռքի տակն են բո-

լոր միջոցները.—մամուլը, վոստիկանները, դատարանները և անթիվ-անհամար բանտերը։ Նա ով լրագիր է կարդում և գոնե մի քիչ հետևում է միջազգային այսորվա կյանքին, նա գիտե, թե աշխարհի բանվորներն ու գյուղացիները հանուն հեղափոխության մղվող այս անհավասար պայքարում ինչպիսի՛ թանդագին զոհեր են տալիս։

Որինակ Բուլգարիայում, վոչ մի յեռ բնկած, վոչ քաղաք չկա, ուր կախաղաններ չլինեն չլինված, և ուր հեղափոխականների արյուն չթափվի։ Ռումինիայի դաշտերը, վոր բազմաթիվ գյուղացիական ապստամբություններ են տեսել—հագեցած են արյունով։

Ֆրանսիայի ու Անգլիայի գաղութներն ել սոսկալի տանջանքներ ու տառապանքներ են տեսել։ Քրքրի՛ր վոր յերկրի կյանքն ուզում ես, և ամեն տեղ ցավ ու սարսափ կզտնես։ Ամեն տեղ սոսկալի կերպով հալածում են նրանց, ովքեր փորձում են բողոքի ու դայրույթի ձայն բարձրացնել։ Հեղափոխականների դեմ մղվող պայքարի ընթացքում բուրժուազիայի ամենատհռելի զենքերից մեկը բանտերն են։ Այնտեղ տառապում, խամրում են մեր յեղբայրներից հազարավորները, վորոնք դատապարտված են յերկա՛ր-յերկա՛ր տարիներով։

Ահա մի քանի թվեր։

Իտալիայում մոտ ինն ու կես հազար հեղափոխականներ կան բանտերում. Լեհաստանում՝ մոտ 5 հազար. Բուլգարիայում՝ մոտ 7, Հընդկաստանում՝ 16 հազար, Հարավ-Սլավիայում, այդ փոքրիկ ու չնչին յերկրում՝ 3 հազար և այլն։ Այս թվերը վերցրած են իրենց կառավարությունների պաշտոնական հաշվետվություններից, ու մենք կատարելապես հիմք ունենք յենթադրելու, վոր նրանք չա՛տ և չա՛տ թերի յեն։

Այն մասին, թե կապիտալիստական բանտերում ինչպես են ապրում քաղաքական բանտարկյալները, մենք իմանում ենք բանտերի հազարավոր փաստաթղթերից, քաղաքական-գաղթականների պատմածներից և բուրժուական մամուլի հաշվետվություններից։

Որինակ, Լեհաստանի կառավարական հանձնաժողովը (Տուգոտան հանձնաժողովը) յերկրի բանտերը հետազոտելուց հետո, ստիպված եր խոստովանել, վոր բանտերի կյանքն անտանելի յե։ Նա հաստատեց բանտի վարչության ստորություններն ու ծեծի և ծաղրելու անհամար փաստեր։ Նա ստիպված եր պարզապես հայտարարել, վոր քաղաքական բանտարկյալները սոված են մնում, այս բառի իսկական

իմաստով, չոր չեն ստանում, բժշկական ոգնություն չի ցույց տրվում նրանց։

Ռումինիայի բանտերում քաղաքական բանտարկյալները ծանր ծեծի և տանջանքի են յենթարկվում։ Բանտարկյալների սովադուլը այնտեղ սովորական յերևույթ է և ճնշվում է տմարդի խստություններով։

Սովադուլը—դա սարսափելի բան է։ Բանտարկյալը սովադուլ է անում միայն ծայրահեղ դեպքում, յերբ բողոքի մյուս բոլոր միջոցները ոգտագործվել են և յերբ իր պահանջների արդարացի լինելը կարելի յե ապացուցել միայն մահով։ Այդպիսի սովադուլների, միայն 1925 թվին մասնակցել են 3,922 քաղաքական-բանտարկյալ (12 յերկրում) և սովադուլի բոլոր որերի թիվը 45,602 է։

Արտաքին ամբողջ աշխարհից, կտրված, բանտի կյանքը չափազանց խիստ է—այդ կյանքը մեզ համար դժվար է յերևակայել։

ՄՈՊՐ-ն ոգնում է կապիտալի բանտարկյալներին։ Նա նրանց յեղբայրական ոգնության ձեռք է մեկնում, և ահա այդ ոգնության ձևերից մեկը շեֆությունն է։

Մենք, ԽՍՀՄ-ի մոպրականներս շեֆություն ենք վերցնում կապիտալիստական բանտերի վրա։ Շեֆություն ենք անում բանտարկված հեղափոխականներին։ Մենք սիրտ ենք տալիս բուրժուազիայի գերիներին, հոգ ենք տանում նրանց մասին, և նրանց համար ամենածանր բոպեներին ասում ենք նրանց, վոր նը-բանք մենակ չեն, վոր մենք, ԽՍՀՄ-ի աշխատավորներս միշտ նրանց հետ ենք։

ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՇԵՖՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն հաշվի յե առնում աշխարհի բոլոր բանտերը։ Նա հավաքում է բոլոր անհրաժեշտ նյութերը—բանտերի մասին, տեղեկություններ բանտի կարգերի մասին և ամեն մի բանտի քաղաքական-բանտարկյալների թվի մասին։ Այդ բանտերը բաժանվում են նահանգական ու շրջանային կոմիտեների միջև և սրանք ել, իրենց հերթին բաժանում են բջիջների վրա։

Շատ հաճախ շեֆական աշխատանքի հենց սկզբում այս կամ այն բջիջն անհրաժեշտ լրիվ նյութ չի ունենալ։ Շեֆությունն ընդունել են, բայց հայտնի չե, թե բանտում քանի քաղաքական-բանտարկյալ կա, նրանք ինչո՞ւ համար են դատապարտված, ընտանիքի ինչ անդամներ ունեն նրանք և այլն։

Այս անհրաժեշտ նյութն ստանալու համար, իրենք պետք է շատ մտածեն ու աշխատեն: Ցերեմն ստիպված են բազմաթիվ նամակներ ուղարկել իրենց շեֆարկյալ բանտը, վորպեսզի մի պատասխան ստանան և այդ պատասխանից հետաքրքիր փաստեր իմանան իրենց շեֆարկյալների կյանքի մասին:

Շեֆական աշխատանքի ձեռնարկելով, պետք է հիշել, վոր յեթե մեզ համար հեշտ է, մեր ազատ յերկրից լուր ուղարկել հեռավոր բանտերը, ապա այնտեղից այդպիսի նամակ ուղարկելը շատ դժվար է: Վորպեսզի այնտեղի բանտից մի նամակ մեր ձեռքը հասնի, նա պետք է յերկար և շատ բազմապիսի դրաքննիչների ձեռքով անցնի: Ռումինիայի և Լեհաստանի քաղաքական բանտարկյալներն, որինակ, ստիպված են զանազան խարդախությունների և ճարպիկությունների դիմել.—նամակը հացի կտորի կամ ծխախոտի մեջ կլորել և այլն: Մեր նամակներն ել, եղ ձևերով է նրանց հասնում:

Կնշանակե շեֆական աշխատանքի հենց առաջին քայլերի ժամանակ մեծ համբերություն, տոկունություն, և վոր գլխավորն է սեր է հարկավոր դեպի սկսած գործը: Յեթե այդ գործը դյուր չի գալիս, յեթե չես կարող սիրել—հանձն մի՛ առնիր:

ՆԱՄԱԿ

Շեֆական հիմնական աշխատանքը—դա նամակագրությունն է քաղաքական բանտարկյալների հետ: Բանտարկված հեղափոխականները մեզնից իմանում են ճշմարտությունը—մեր կյանքի և մեր յերկրի շինարարության մասին. մենք նրանցից իմանում ենք նրանց ծանր պայքարի և բուրժուազիայի բազմաթիվ հանցագործությունների մասին:

Շեֆի նամակ ստանալու որը—կատարյալ տոն է բանտում: Հեռավոր զնդաններից ստացված լուրերից, մենք տեսնում ենք, թե ինչպիսի՛ անկեղծ ու մեծ բերկրանք և պատճառում մեր ամեն մի վողջույնը, ամեն մի հիշեցումը այն մասին, թե նրանք, մեր հեռավոր յեղբայրները, մոռացված չեն:

Այնտեղ, սահմանից այն կողմ շատ լրագիրներ են հրատարակվում, վորոնք զանազան ձևերով գրպարտում են յերիտասարդ խորհրդային յերկրին: Այդ լրագիրներում պատմում են, վոր մեզ մոտ համարյա ամեն որ սպանություններ ու մահապատիժներ են լինում, վոր մեր յերկիրը կորստյան ու ավերման է դատապարտված: Միայն այդ տեսակ լրագիրներ են բանտն ընկնում և դրանց կարդալով—յերբեք

չես կարող ճիշտ բան իմանալ խորհուրդների յերկրի մասին։ Մեր պարզ ու անկեղծորեն գրված նամակները կոգնեն մեր շեֆարկյալ քաղաքական բանտարկյալներին ըմբռնելու, թե ուր է ճշմարտությունը և վորն է հնարովին։

Այժմ տեսնում ենք, թե ինչ ահագին նշանակություն ունի շեֆական նամակը, վոր հաճախ գրված է լինում գործի ընթացքում։ Տեսնում ենք, վոր այդպիսի նամակին հատուկ ուշադրությամբ և սիրով պետք է վերաբերվել։

Շատ հաճախ, բջիջը հանձնարարում է շեֆական նամակ գրել վորևե քարտուղարի կամ գործավարի։ Այդպիսի ձևով գրված նամակը յերբեմն վատ չե լինում, բայց ավելի հաճախ կամ շատ անպետք է դուրս գալիս կամ շատ չոր ու ցամաք ու անհետաքրքիր։ Շեֆական նամակով պետք է հետաքրքրվի ամբողջ բջիջը և ՄՈՊՐ-ի բոլոր անդամները պետք է մասնակցեն այդ նամակը գրելուն։ Շեֆարկյալին գրված նամակը վոչ միայն հեղափոխական բացականչություններ պիտի պարունակի իր մեջ, վոչ միայն վստահություն պիտի ներշնչի, վոր «մեզ մոտ ամեն բան լավ է ու կարգին»—այլ և պիտի տեղեկություն տա իր գործարանի, գյուղի, բջիջի իրական կյանքի մասին։

Պետք է սիրտ տալ, խրախուսել, բայց պետք է և՝ պատմել իրենց աշխատանքի մասին։

ԻՍԿ ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ

Մենք անսահման հարուստ նյութ ունենք մեր ձեռքի տակ, վոր խիստ հետաքրքրական է մեր սահմանադծից այն կողմն յեղող ընկերներին։ Պետք է միայն հավաքել, կանոնավորել և գրի անցկացնել։

Որինակ այսպես ել է պատահում. մեր տնտեսությունը դեռ հեռու յե կատարյալ լինելուց։ Նա դեռ շատ կողմերով յետ է արտասահմանյան տեխնիկայից։ Արևմտյան ընկերներին նամակ գրելիս, կարելի յե հարց ու փորձ անել այնտեղի առավելությունների մասին—սովորել։ Հաճախ կենդանի նամակը, կենդանի որինակով, ավելի լավ է հասկացվում, քան գիրքը։

Անցյալ տարի, յերբ մեր մանվածային գործարանները նոր եյին սկսում յերեք դաղդահյան աշխատանքների անցնել ԽՍՀՄ-ի ջուլհակ մոպրականները հարցրին գերմանացի բանտարկված ջուլհակներին.—«Ձեզ մոտ ի՞նչպես է, վաղո՞ւց է արդյուք։ Քանի՞ բոպեյումն եք հյուսվածը հանում» և այլն։

Այսպիսի յերևույթներ, վորոնց մասին կա-

բելի է խոսել և խորհուրդ հարցնել, մեր կյանքում շատ կան։ Ու փորձի այսպիսի փոխանակություն ունենալը, չափազանց օգտակար է։

Մոպրի անդամ մեր գյուղացիները արևմտյան ընկերներից կարող են շատ օգտակար խորհուրդներ իմանալ՝ գյուղատնտեսության մասին։ Նրանք շատ սիրով կպատասխանեն և սահմանի այն կողմն յեղող բանտարկյալների հետ մեր նամակագրությունը կաշխուժանա և ավելի հետաքրքրական ու կենսական ձևեր կընդունի։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻ՞Ր ՔՈ ՇԵՖԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՅԵՐԿԻՐԸ

Շեֆական աշխատանքը չի սահմանափակվում միայն քաղաքական բանտարկյալների հետ նամակագրությամբ։ Վերևն արդեն գրեցինք, որ սկզբի շրջանում կարող են անհրաժեշտ նյութ չլինել շեֆարկյալների, բանտի և ռեժիմի մասին։ Նամակ ուղարկելու դժվարությունները կարող են յերկարացնել այդ ժամանակաշրջանը։

Շատ հաճախ, յերբ յերկար ժամանակ նյութ չկա շեֆարկյալ բանտից, շեֆ աշխատավորները հուսահատվում են, լճանում, շեֆական աշխատանքները թուլանում է և շատ դժվար է նորից կարգի գցել։ Աշխատանքի ժամանակ, պետք է խուսափել այդպիսի անկումներից։ Պետք է հիշել, որ շեֆական աշխատանքի հիմնական յերևույթներից մեկը շեֆարկյալ բանտի յերկրի ուսումնասիրությունն է։ Սա յել հետաքրքրական և շատ օգտակար աշխատանք է։ Նա մեզ ծանոթացնում է սահմանից էն կողմն յեղող ընկերների հետ, այնտեղի հեղափոխական շարժման հետ և օգնում է շրջապատը հեշտությամբ ըմբռնելու։

Ամեն մի գրադարանում ել կարելի է հարկավոր գրքերը գտնել։ Յեթե գրադարան չկա, ապա լրագրներ կան, սպիտակ տերրորի մասին տեղեկանքներ կան, որ ուղարկում է ՄՈՊՐ-ի Կ. Կ-ն նույնպես և ՄՈՊՐ-ի հանդեսը կա։ Նրանց մեջ միշտ կարելի է գտնել հարկավոր նյութերը, որոնցով կարելի է ուսումնասիրել ուղած յերկիրը, ծանոթանալ այնտեղի բանտերի հետ և ապագա աշխատանքների համար անհրաժեշտ յեզրակացություններ հանել։ Աշխատանքի այս մասի կանոնավոր և գործնական մերձեցումից կախված է և շեֆության հետագա զարգացումը։

տարկյալների մասին—ու դա անպայման մեծ օգուտ կբերի: Սա պետք է հաշվի առնել, և միշտ աչքի առաջ պետք է ունենալ: ՄՈՊՐ-ի ընդհանրական յերեկոներին պատվավոր տեղ պետք է բռնեն իրենց ուժերով կազմակերպված բեմադրությունները, գեղարվեստական գրվածներից վորոշ հատվածների (պատմվածք, վոտանավոր) բարձրաձայն ընթերցումը—մանավանդ, յեթե նրանք պատկերացնում են սահմանից են կողմն յեղող քաղաքական բանտարկյալների դրությունը:

Ե՛Լ ԱՎԵԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շեֆական աշխատանքը, վոր առաջին հայացքից չափազանց պարզ է թվում, տեսնում ենք, վոր մի շարք դժվարություններ ունի: Դա, ավելի, քան վորևէ այլ աշխատանք ուշադրություն և սեր է պահանջում: Բայց իր բոլոր դժվարություններով հանդերձ—յերբ գործը հմտությամբ դրվի, կարող է ՄՈՊՐ-ի աշխատանքների ամենահետաքրքրական և օգտակար կողմը դառնալ: Դա շատ ավելի մոտ և հասկանալի յե: Այդ նրա առավելությունն է:

Ու լավ կարող է դնել այս գործը նա, ով սիրում է գործը և գիտե, թե վորքան օգտակար ու կարևոր է սա:

ՀԱՆՐԱՅԻՆ Գ... Публичная Б... 1922

ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Լսեք Կոմյերիտականներ . . . . . 55 եջ 20 կոպ.
2. Ա. ՄԱՐՏԻ. Ֆրանսիական հանրապետության բանտերում . . . . . 73 եջ 30 կոպ.
3. Ինչ է ՄՈՊՐ-ը . . . . 18 եջ 15 կոպ.
4. ՄԱՐՏԻՆՈՎ. ՄՈՊՐ-ը յեվ շեֆությունը . . . . 16 եջ 5 կոպ.
5. ԳՈՐՆԵՎ. Ինչ պետք է գիտենա ամեն մի գյուղացի . . . . . . 12 եջ 5 կոպ.
6. ԳԵՅԼԵՐ. Ում յեվ ինչպես է օգնում ՄՈՊՐ-ը . . . . 14 եջ 5 կոպ.
7. ՏԱՐԱԿԱՆՈՎԱ. Գեղջկուհի մտիր ՄՈՊՐ-ի շարքերը . . . . 16 եջ 5 կոպ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

1. ՄԵՆԿՈՎ. Ինչպես են ապրում գյուղացիները կապիտալիստական յերկրներում.
2. ԳԵՅԼԵՐ. ՄՈՊՐ-ը Խորհրդային Միության մեջ.

Պատվերները ուղղել ՄՈՊՐ-ի Հայաստանի Կենտրոնական Կոմիտե

Աբովյան փող. Նո. 34 (Հեռախոս Նո. 309)

ՀՀ Ազգային գրադարան
NL0211376

44. 391

ԳԻՆՆ Է 5 ԿՊԳ.